ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 4.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***2016 թվականի հուլիսի 9-ին*** Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի համակարգողի ընտրության համար անցկացնել Արարատի մարզի փաստաբանների ժողով (**այսուհետ՝ Ժողով**):

2. Սահմանել, որ՝

2.1. ***թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի հունիսի 15-ից (սույն որոշման հրապարակման օրվանից) և ավարտվում է 2016 թվականի հունիսի 23-ին ժամը 18.00-ին.***

2.2. ***թեկնածուների համակարգչային հմտությունների ստուգման և գրանցման աշխատանքները կատարվում են մինչև 2016 թվականի հունիսի 28-ը (ներառյալ).***

2.3. ***քարոզչությունը սկսվում է 2016 թվականի հուլիսի 1-ից և ավարտվում է 2016 թվականի հուլիսի 7-ին.***

2.4. ***2016 թվականի հուլիսի 8-ը համարվում է լռության օր.***

2.5. ***Ժողովի քվեարկությունը սկսվում է 2016 թվականի հուլիսի 9-ին ժամը 11:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:***

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- իրազեկել Արարատի մարզի փաստաբաններին Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու և Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2, 4-րդ

15 հունիսի 2016թ.
թիվ 189-Լ

հարկ) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը փակցնելու միջոցով:

- սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին.
- մարզային հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

4. Հաստատել Արարատի մարզի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

15 հունիսի 2016թ.
թիվ 189-Լ
ք. Երևան

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
15.06.2016թ. թիվ 189-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Արարատի մարզում մարզային համակարգողի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքիյան 2 15.06.2016թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2016 թվականի հուլիսի 9-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) դահլիճում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, մեծ դահլիճ) Արարատի մարզի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ հրավիրվելու է Արարատի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք, այսուհետ՝ Ժողով):

1. Քվեարկությունը սկսվում է **2016 թվականի հուլիսի 9-ին, ժամը 11:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:**
2. Յուրաքանչյուր մարզի համար մարզային համակարգողի **թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի հունիսի 15-ից և ավարտվում է 2016 թվականի հունիսի 23-ին, ժամը 18:00-ին:**
3. Քարոզչությունը սկսվում է **2016 թվականի հուլիսի 1-ից (ներառյալ) և ավարտվում է 2016 թվականի հուլիսի 7-ին:**
4. Յուրաքանչյուր մարզի փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:

Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը (**«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի** 5.5 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքիյան 2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար